ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 76 - Ա
25 ապրիլի 2014 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2014-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.19-րդ կետերի և ՀՀ կառավարության2014 թվականի ապրիլի 3-ի <<Հայաստանի Հանրապետությունում ընտանիքի տարի հայտարարելու և ընտանիքի տարվա հետ կապված միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> N 356-Ա որոշման պահանջներով՝

***որոշում եմ՝***

Հաստատել՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014-2015 թվականներին ընտանիքի տարվա կապակցությամբ կազմակերպվող և անցկացվող միջոցառումների կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014-2015 թվականներին ընտանիքի տարվա կապակցությամբ անցկացվող միջոցառումների ծրագիրը՝ համաձայն N2 հավելվածի:
3. Կազմկոմիտեին / նախագահ Ս. Խլղաթյան/ ՝
   1) ապահովել ծրագրով նախատեսված միջոցառումների մասսայականությունը.
   2) միջոցառումների կազմակերպման աշխատանքներին ներգրավել համայնքների ղեկավարներին և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:
4. Սույն որոշման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Հակոբյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

Ռ .ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N1

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի ապրիլի 25 -ի
N 76 - Ա որոշման

**Կազմ**
**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում 2014-2015 թվականներին ընտանիքի տարվա կապակցությամբ կազմակերպվող և անցկացվող միջոցառումների կազմկոմիտեի**

Խլղաթյան Ս. - մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, /նախագահ/
Բաղալյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ասատրյան Ի. – մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
Մելքոնյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Հովհաննիսյան Դ.- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Հովհաննիսյան Վ.- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Մուշեղյան Յու. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Գալոյան Մ. - մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
Շահբազյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ
Մնացականյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Ջարվաղարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ
Խլղաթյան Խ. - <<Գեղամա աշխարհ>> թերթի գլխավոր խմբագիր/համաձայնությամբ/

Աշխատակազմի ղեկավար՝ Ս. Խլղաթյան

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2014 թվականի ապրիլի 25 -ի
N 76 - Ա որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2014-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԱՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN ը/կ | Միջոցառման անվանումը | Միջոցառման նկարագիրը/ ակնկալվող արդյունքը | Կատարողը | Համակատարողը | Ժամկետը | Ֆինանսական ապահովումը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1. | «Իմ ընտանիքի պատմությունը» թեմայով շարադրությունների հանրապետական մրցույթի մարզային փուլի անցկացում | ՀՀ Գեղարքունիքի մարզի բոլոր դպրոցներում կանցկացվի «Իմ ընտանիքի պատմությունը» թեմայով շարադրությունների մրցույթ, որի արդյունքները կամփոփվեն ու ՀՀ կրթության և գիտության նախարարություն կներկայացվեն լավագույն շարադրությունները՝ հանրապետական փուլին մասնակցելու համար | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | ՀՀ Գեղարքունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ | 2014 թ. ապրիլ-մայիս | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 2. | Ազգային խաղերի շրջանակում «Հայկական ավանդական հարսանիք» տոնական միջոցառման անցկացում | Մարզում կանցկացվեն «Հայկական ավանդական հարսանիք» տոնական միջոցառում՝ նորաստեղծ ուսանողական, կամ ոսկե և ադամանդե հարսանիք նշող ընտանիքների մասնակցությամբ,որը կզուգորդվի ազգային | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | <<Գեղարեգ>> գիտամշակութային հասարակական կազմակերպություն, համայնքների ղեկավարներ /համաձայնությամբ/ | 2014 թ. սեպտեմբեր-նոյեմբեր | օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | խմբագրություն | | |
| 6. | Սոցիալապես անապահով՝ 9 և ավելի երեխա ունեցող ընտանիքների բնակարանային խնդիրների ուսումնասիրում | ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 9 և ավելի երեխա ունեցող ընտանիքների բնակարանային կարիքների ուսումնասիրում, ընտանիքների հետ խնդիրների քննարկում և առաջարկությունների ներկայացում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն<br><br>ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | Համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ) | 2014-2015 թվականների ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 7. | Ընտանեկան մասնագիտական դինաստիաների փառաբանման և մեծարման հանդիսությունների կազմակերպում | Տարբեր մասնագիտական օրերին նվիրված հանդիսությունների ժամանակ հատուկ ուշադրության կարժանանան ընտանեկան մասնագիտական դինաստիաները, կկազմակերպվեն մեծարման ցերեկույթներ, դինաստիաների ներկայացուցիչները կարժանանան խրախուսանքի: | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներ ղեկավարներ | Համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)<br><br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2014-2015 թվականների ընթացքում | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |
| 8. | Մարզի համայնքներում «Հերոսի ընտանիք» միջոցառումների կազմակերպում | Մարզի համայնքներում ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ կկազմակերպվեն միջոցառումներ Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան ազատամարտում | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ | Համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ՊՆ տարածքային զինվորական կոմիսարներ (համաձայնությամբ) | 2014 թ. մայիսի 15 | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | խաղերի բեմականացմամբ | | | | |
| 3. | <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ում <<Ասեղնագործների երեք սերունդ>> խորագրով ցուցադրության կազմակերպում, մարզի գրադարաններում ընտանիքի տարվան նվիրված թեմատիկ ցուցահանդեսների ու միջոցառումների անցկացում | մարզային թանգարանում և համայնքների գրադարաններում կկազմակերպվեն թեմատիկ ցուցահանդեսներ, դպրոցահասակ երեխաների համար կանցկացվեն «բաց դասեր», սեմինարներ, քննարկումներ՝ ընտանեկան հարցերի շուրջ: | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ տնօրինություն<br><br>համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)<br><br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ) | 2014-2015 թվականների ընթացքում | Ֆինանսավորում չի պահանջվում: |
| 4. | ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի ամենամյա հանրապետական մրցույթի շրջանակներում բազմազավակ մարզական ընտանիքների խրախուսում | ՀՀ Գեղարքունիքի մարզում անցկացված տարածքային և մարզային փուլերի մասնակից բազմազավակ ընտանիքներին աջակցություն և խրախուսում | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | համայնքների ղեկավարներ | 2014 թ. հունիս-օգոստոս | ՀՀ պետական բյուջե և օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |
| 5. | ՀՀ Գեղարքունիքի մարզի խնամատար ընտանիքների խրախուսում, նրանց մասին հեռուստահաղորդման պատրաստում և հեռարձակում | Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ մարզամշակութային միջոցառման կազմակերպում, խնամատար ընտանիքների խրախուսում | ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին | համայնքների ղեկավարներ (համաձայնությամբ)<br><br>հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)<br><br><<Գեղամա աշխարհ>> թերթի | 2014 թ. հունիսի 1 | օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
|---|---|---|---|---|---|---|
| | | զոհվածների ընտանիքների անդամների համար: | | | | |
| 9 | ՀՀ Գեղարքունիքի մարզում Ընտանիքի տարվա հանդիսավոր ամփոփում | Հանդիսավոր նիստի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետը կհանձնի շնորհակալագրեր՝ Ընտանիքի տարվա խորագրի ներքո հայտարարված լավագույն միջոցառումների հեղինակներին, ակտիվ մասնակիցներին, այդ թվում՝ ընտանեկան բիզ-նեսի լավագույն ներկայա-ցուցիչներին, լավագույն ժողովրդագրական ցուցանիշներ արձանագրած համայնքներին, ընտանիքի թեման լավագույնս լուսա-բանած ԶԼՄ-ների ներկա-յացուցիչներին: | ՀՀ Գեղարքունիքի աշխատակազմ | Մարզի զանգվածային լրատվամիջոցներ | 2015 թ. ապրիլ | օրենքով չարգել-ված ֆինանսա-վորման աղբյուրներ |

Աշխատակազմի ղեկավար՝ Ս.Խլղաթյան